

giennes récueillies par le P. Nerses Sargissian. Ընթերցեալ ի  
25 մետք. 1869.

22. Եշանօթութիւնք հայ արձանագրութեանց ի Պողկարի, վիմագիր տախ-  
տակաւ մը. Notes sur les inscriptions arméniennes de Bolghari,  
avec 1 pl. lith. Ընթերցեալ յ' 13 հոկտ. 1867:

23. Տեղեկութիւնք մեզի ծանօթ ամենահին արձանագրին վրայ ի Ս.  
Յովհաննէս որ առ Մուկատ-շայի. Notice sur la plus ancienne in-  
scription arménienne connue, (à Sourb Ohannès, sur le Mu-  
rad-thaï). Ընթերցեալ ի 1 օգոստ. 1856:

24. Ժամանակագրական տեսակիտով նշանաւոր քանի մի հայկական ար-  
ձանագրութեանց վրայ. De quelques inscriptions arménientes, re-  
marquables au point de vue chronologique. Ընթերցեալ յ' 2  
դեկտ. 1859:

Շարայարելի

---

## ԸՆԴ ՀԱՅԱՍՏԱՆ ՌՈՒՍԻՈՑ

(Տես յ' էջ 151)

### Ը

Կապերտի վաձառական մը և իր գործակատարը. — Բժիշկ  
Արապեկով. — Կարաշանի կարգադրութիւն. — Շոշիի պար-  
ուկաները. — Այցելուրիւն մի առ կյանեն թիգա Ղուշի Միրզա:

Հազիւ թէ սոսուընիս պանդոկէն դուրս դրեր էինք, Թաթա-  
րի մը հանդիպեցանք, որ մեզ կ' ընկերակցէր, քայլիւ չափ չզա-  
տուելով: Ամուսնոյս հասկըցուց թէ յանձնարարութիւն ոնէր  
սենեկի մանր գեղեցիկ զարդեր և ի Շոշի գտնուած հին կա-  
պերուներ ցուցընել, դիւրագին վաճառելու խոստմունքով: Նե-  
զուած ու անհանգիստ այսպիսի նեղիշ գործակատարէ մը, վեր-  
ջապէս տեղի կու տանք: Անվերջանելի ու իրարմէ անհարմ ան-  
ձուկ ճամբաներէ առաջնորդելով, կանկ կ' առնու պարսկական  
ոճով շինուած վայելուչ տան մը առջև, որ գորդի վաճառականի

մը բնակարանն է։ Բարակամիտ ու հնարիմաց մարդու կերպարանք ունեցող թաթար մ'է տէրը, որ մարդավարութեամբ կը տանի զմեղ պղտի սրահ մը՝ վանդակապատ պատուհաններով, ցած ու նկարակերտ ձեղունով։ որոյ կահկարասիքն են գորգեր, բարձեր և պարսկական հայելիք։ Անոր կից սենեկին մէջ ժողուած են կանայք և մանկունք, որոց շաղակրատելը կը լսենք։

Բարեբարոյ վաճառականիս մեզի ցոյց տուած այսափ և այսպիսի քաղաքավայրութեանց նպատակն է՝ իր կապերտից և գորգերու վաճառքը։ ուստի կ'իջեցընէ կամարակապ ներքնայարկ մը, այնպիսի արուեստով մը լուսաւորուած որ գուրս ցատքեցընեն իր վաճառուց գործուածին բարակութիւնը, մետաքսին փայլունութիւնը և գեղեցիկ վառ գոյները։ Ոմնանք յիրաւի խիստ ընտիր են, բայց գիներնին ալ չափէ գուրս բարձր։ Մենք ամենուն ալ ակնարկ մը կ'ուզենք տալ հաւասար անտարբերութիւն մը երեցընելով։ վասն զի վաճառականին քով է նաև գործակատարն, որ հետազօտ աչքով մը կը քննէ մեր գէմքին ամէն շարժումը։

Քանի մը կտոր ապրանք մէկդի գնելով՝ կը դառնանք յառաջին սրահն, գիները յարմարցընելու։ Երիտասարդ ծառայող մը ափսէով թէյի գաւաթիներ կը բերէ ու կը հրամցընէ։ Գնոյն վրայ փոխադարձ վիճաբանութիւնք՝ հանդարատ, ցուրտ ու անտարբեր կերպով կը յառաջին։ Տիրողը կողմանէ առաջարկուած բարձր գինը՝ կամաց կամաց սկսի իջնել։ յիսուն բուրըին՝ երեսունի, ու քանի մը վայրկենին՝ մէկ ձեռքն երկինք, միւսը սրտին վրայ, ու գրեթէ լալով՝ քսանով գոհ կ'ըլլայ։ Ո՛րչափ անօդուած վատնուած ժամանակ, և որպիսի համբերութիւն։

Ուր ուրեմն կը դառնանք ի պանդոկն, կամ քաղաքին մէջ այդ անունը կրող տունը. զի բուն հիւրանոց չունի Շուշի, այլ Մէյտան հրապարակէն քիչ հեռու իր գործը գիտցող հայու մը տունն է, որ քանի մը սենեակ եկող գացող ճանապարհորդաց համար պահած է, կերակուրն ալ պատրաստելով, ուր և մեք բաւական հանգիստ ենք՝ հետերնիս ունեցած ճանապարհի կարեռաց գիւղութեամբը։

Ժամը իննին քաղաքը լուսաւորող կանթեղները մարելու նըշանը կը տրուի. ալ անկէ ետքը ամէն տեղ խաւար է և մուլժ, և գիշերը քալելու պէտք ունեցողք՝ ձեռուընին մէյմէկ լապտեր կը կրեն. և տարօրինակ տեսարան մը կ'ընծայեն մեզ, այդ մըթին ճանապարհաց մէջ վեր վար շարժող ուրուատեսիլ լոյսերը։ Պզսի ծառայողք՝ ձեռուընին մեծ լապտեր մը՝ գիշերային պացելութեանց ելլոց իրենց տիրուհեաց դիմացէն կ'երթան,

**9 Մայիս.** — Շուշի հասնելնէս ի վեր՝ միշտ մեծ վառարանի կարօտ ենք ջերմանալու համար. կուրի ափանց հեղձուցիչ տարբիւնը հսա չիկայ. այս գիշեր մանաւանդ աւելի ցրտութիւն զգացինք, սակայն արթը լնալուս՝ տեսանք որ պայծառ արեգական մը լցա ողողեր էր սենեկին եօթն պատուհաններէն.

Առաջին այցելութիւննիս եղաւ առ նալայիկն, որ նոյն միջոցին շգտնուելով ի տան՝ իր թաթար պրիստան ընդունեցաւ զմեզ՝ սիրալիր մեծարանօք ի բանս, բայց ոչ հաւասարապէս նաև ի գործ... Բարեբաղդութիւնն եղաւ մեզ Աթապէկով հմտա բժշկին հետ ծանօթանախիս, որ մարդասիրութեամբ հաղորդեց մեզ կարեոր տեղեկութիւններ քաղքին առողջապահիկ վիճակին վրայ. Համաճարակ հիւանդութիւնք սակաւադէպ են ի Շուշի. ծաղիկը միայն մեծ կոտորած կ'ընէ թաթարաց մէջ, որ համոզուած են թէ աստուածային պատգամանաւոր կամ աղդեցութիւն մ'է այն, և չեն ուզեր որ և իցէ կերպով անկէ զգուշանալ. Ծաղկի հիւանդութեան գէպք մը որ պատահի, մայրերը կը փութան իրենց զաւկըները ախտացելոյն տունը տանիլ, որպէս զի անով վարակին: Այսպիսի դժպատեհ նախապաշարման մը հետեւանք է յաճախութիւնն ծաղկաւեր դիմաց, և շատերուն նաև կուրութիւնն աշաց: Քիչ ատենէ ի վեր է որ Աթապէկով ընկերակից բժիշկ մը քովն առեր է, երիտասարդ թաթար մը, որ ազգայնոց մէջ առաջինն է բժկութեան ուսման հետևող: իր ձեռքով ու ջանքով՝ պատուաստը մուտ գործէ թերեւս իրեններուն մէջ ընդհանուր առողջութեան մեծ շահովը:

**10 Մայիս.** Թամիրեանցի միջամտութեան չնորհիւ, որ հայագոգի միրալիր վաճառական մ'է և մեր թղթակիցը, անվերջանալի բանակցութիւնք եղան մեր կարաւանին նկատմամբ. և ուրութեան որոշուեցաւ բեւնաբարձ գրաստ գործածել, զոր կիրուցի Հայք պիտի տային: Խօսքը մնաց հեծնելու երիվարաց և խոհարար մը մեզ գտնելու համար:

Գեղեցիկ եղանակի օր մը բաւական եղեր էր՝ առջի օրուան անընդհատ անձրեւաց ջուրը մասամբ ցամենցը ընկերութեան խորտուբորտ նեղ և անձուկ ճամբաներէ կ'ելլէինք կ'իջնէինք: ի խնդիր աեղեց մը ուստի կարող ըլլանք քաղքին ամբողջութեան տեսարանը աշուշընուս առջև ունենալ: Բայց անկարելի էր այս փափաքին գործադրութիւնն. այնչափ ցիր ու ցան էին շէնքերը: որ հարկ եղաւ անկէ ետ կենալով՝ գոհ ըլլալ անոր քանի մի մասնական տեսարաններով:

Շուշի քաղքին մէկ յատկութիւնն այն է որ ամէն տուն առանձին իր պարտէզը ունի, բայց դժբաղդաբար այնպիսի խը-

նամքով որմուած որ անկարելի է ներքին տեսիլը։ Մեր այցելուաշխանն ատեն՝ այդ անհամար պարտիզակաց մէջ տնկուած պըտղատու ծառք ծաղկած են, ու իրենց կարմիր ու ճերմակ ոստոց վրայ բազմաթիւ թռչունք կը զրօսնուն.

Հայ կնկան մը հաւանութիւնն առնլով զինքը լուսագրելու, էրկանը բացակայութեան ատեն, յորմէ թուի թէ սաստիկ վախոնի, կը մոնենք ի բնակարանն, որ խիստ հաճոյական է։ Տան մէջ միայնակ է, հետն ունենալով տղան ու գրեթէ հարիւրամեայ ու կոյր պատկառելի պապը։ Երբ ամուսինս դէմքը կը լուսագրէր, ետեւ էի մեծ աշխատանքով համոզել զծերունին, որ կը գանդատէր ենթադրելով թէ տան մէջ գտնուած ստակը վերցնելու դիտմամբ մտած ըլլանք հն։

14 Մայիս. Աժմապէկով բժիշկ փափաք ոնէր ծանօթացընել զմեզ Բիզա-Ղուլի-Միրզա պարսիկ իշխանին՝ իր բարեկամին հետ։ Ուստի առաջնորդեց մեզ քաղաքին բարձրադիր կողմք՝ ուր գեղեցիկ ամարանոցի մը մէջ կը բնակէր իշխանն ընտանեօքը։ Գտանք զինքը վրանաձև շէնքի մը տակ որ ի պարտիզին, ուր անձամբ կ'աշխատի, և հիացանք առ մեզ ցոյց տուած սիրալիր ընդունելութեան վրայ։

Գրեթէ վաթնամեայ է Բիզա-Ղուլի-Միրզա իշխանն, բարձրահասակ, և զինուորական կատարեալ քալուածքով կրելով ուրս զօրավարի համազգեստը. փարիզացիի մը պէս կը խօսի զգաղղիականն, և բուն տիպար մ'է կրթեալ աղնուականի։ Հայրն՝ Պէհմէն-Միրզա, Նասրէտ-տին շահին եղբայրը, Դավիէժի քաղաքապեան էր։ Զարմանալի գործունէութեամբն յաշողեցաւ բոլորովին կերպարանափոխ ընել Ստրապատականի գաւառը՝ բարգաւաճ վիճակի մը մէջ գնելով։ Բայց այս յաջողութիւնք տէրութեան գլխաւոր նախարարաց մէկուն նախանձը գրգռեցին, որ համոզեց զՇահն պաշտօնէն ձգել զեղբայրն, թելադրելով թէ ժողովրդեան սիրտը յինքն ձգած է և կրնայ ուղած օրը ինքվինքը Պարսկաստանի պետ հոչակել։ Երկու եղբարքը իրարու վրայ մեծ սէր ունենալով, Շահը վստահացուց զՊէհմէն-Միրզա որ կրնայ իր պաշտօնը վարել, բաւական է որ գլխաւոր նախարարը հաւանի։ Խակ սա ի ծածուկ ետեւ էր ի դաշտանութիւն։ և իմանալով Պէհմէն-Միրզա թէ որպիսի՝ վտանգաց մէջ է կեանքը, փախաւ ի Դավիէժ, ուր անապարանօք ժողվելով իր ստացուածքն՝ փութաց անցնիլ յերկիր Ռուսաց, նախ հիւը և ապա նաև հապատակ ըլլալով։

Իշխանը ներկայացոյց մեզ իր երկու որդիքը, զՓաթալի-Միրզա և զէքպէր- Միրզա, երկուքն ալ գնդապետք ի բա-

Նակին Ռուսաց, ու թոռներէն մէկն, ութ տարուան գեղանի օրիորդիկ մը. յետոյ տարաւ եւրոպական տարագու կահաւորեալ ընդունելութեան սրահն, ուր սուրճ հրամցուցին մեզ: իր պարզասիրութեամբ, չնորհալի ու համարձակ վարմամբ՝ շատ համակրելի անձ մ'է իշխանը:

Մ'եծ ծակերով դաստիարակել տուած է որդիքն, մանչ ու աղջիկ, յուսմունս կենդանի լեզուաց. բնագիտական ու բնական գիտութեանց, մատենագրութեան, երաժշտութեան, և այլն. նոյն իսկ այժմ իր քովն է՝ տղոց նախկին ուսուցչաց մէկն, գաղղիացի մը, որ ծերութեան օրերը հանգիստ ու խաղաղ կ'անցընէ՝ ընտիր ու սիրելի գերդաստանին հիւրասէր խնամքն վայելելով:

Կը շարունակուի

## ԳԵՂՐԳ ԳԱՄԵԼԵՐ

### ԲԱՐԵՐԱՐ ԵՂԻՍԱԲԵԹՈՒՊՈԼՍՈՅ

**Ե**թէ բարերարութիւնը վսեմ գործ է և գովասանաց արժանի, ուղղախոհ և ճշմարիտ մարդկութեան բարոյական և բնական պարտքն է զանոնք յերկինս բարձրացնել, որ իրենց բարեգործութեամբը կարօտելոց երջանկութեան ամրափակ գոները կը բանան:

Գրիգոր Ռւզտեան (Տէվէճեան) ազգաւ հայ՝ ծնեալ ի Գաղատիա, թողլով իւր հայրենիքը, Դրանսիրվանիոյ Եղիսաբէթուպօլիս քաղաքը քաշուեցաւ բնակութեամբ, ուր և ծանօթանալով Աննա Ախմատեանի հետ, մէջերնին սիրոյ և մտերմութեան կապը օր ըստ օրէ զօրանալով՝ օրինաւոր ամուսնական լծով կապուեցան իրարու հետ:

Ըստ վկայութեան իրենց ամուսնական վաւերագրոյն, յորում Ռոպէր թուրքեան, Դուկաս խօսվէճեան ինչպէս նաև Եղիսաբէթուպօլսոյ աւագերէց Մէքայէլ Տանիէլեան իբրև վկայ, իրենց ստորագրութեամբը կը հաստատեն, թէ իւր ամուսնութեան առթիւ